

«Արձագանք»-ը, որ ամբողջ տարի շարունակ լուռ էր մնացել «Մուրճ»-ի նկատմամբ, բաւականանալով միայն «Մուրճ»-ի բովանդակութիւնները լալտնելով, շատ անգամ ի հարկէ վեղաթիւրած կերպով, իւր 46-երորդ համարում վերջապէս բացում է իւր բերանը՝ և, «Ընթերցող» համուստ ստորագրութեամբ, մի գրութիւն է հրատարակում, որի մէջ քանի քանի տեղ դատափնտում է «Մուրճ»-ի լեզուն և, իբր օրինակ, առաջ է բերում մի նախադասութիւն, որը իբր թէ արդ «Ընթերցող» գտել է «Մուրճ»-ի № 11-ում: Ահա՛ արդ նախադասութիւնը, որը «Արձագանք»-ը ուզում է մատնել հասարակութեան ծաղրին.

«մեր մտաւոր զարգացման գործում գլխաւոր դերակատարները (ак-теры?), մտքեր լուսաւորողներն եղել են և են է՛ն նոքա, որոնք լուսաւոր ազգերի կեանքին հմուտ են և է՛ն»:

Այս նախադասութեան մէջ փակագծի մէջ դրած ուսուերէն խօսքը իւր հարցականով և ինչ որ ճօտր տառերով է տպած — բոլորը «Արձագանք»-ինն է: «Արձագանք»-ը ուզում է զարմացնել ընթերցողին, թէ էդ ինչպէս կարելի է՝ հմուտ «լինել»-ուց զատ, դեռ էլի «լինել»:

Դէ՛հ, մենք պարտաւորւած ենք լալտնելու, որ «Արձագանք»-ի խարդախութիւնը մեզ զարմացնում է, որովհետեւ ամենքը, որոնց ձեռքին կա «Մուրճ»-ը, կարող են համոզուել, որ № 11, երես 1861, տող 17—20՝ մենք ասել ենք արդէս.

«...մեր մտաւոր զարգացման գործում գլխաւոր դերակատարները, մտքեր լուսաւորողները եղել են և են նոքա, որոնք լուսաւոր ազգերի կեանքին հմուտ են և զա՛ծ և են»:

Ինչո՞ւ «Արձագանք»-ը, մեր լեզուի մասին խօսելիս, թող է տալիս իրան նախադասութիւնը վեղաչրջել, միտքը խանգարող մի բառ դէն գցել: Նախադասութիւնը կարող է լաւ լինել, վատ լինել, — թողնենք արդ: Բայց զալ ու հասարակութեանը ի՞նչէ, թէ արդ ինչ գրողը արսպէս է գրում, — դորա համար սէտք է մի առանձին տեսակի լանդգեութիւն: «Արձագանք»-ը ապացոյց է տալիս, որ նախօքեր վեղաչրջելու ընդունակութիւն ունի: «Արձագանք»-ը ապացոյց է տալիս, որ մի խմբագրութեան մէջ կարող են հաւաքւած լինել «գրականական մարդիկ», բայց որ «գրականա-

կան ճաշակ» և «շխտակութիւն», «անխարդախութիւն» կարող են տարբեր հասկացողութիւններ լինել:

Մի աղբյուրի վարմունք մենք նկատած ենք այս տարւոյ ընթացքում, «Մուրճ»-ի նկատմամբ, «Նոր-Դար»-ում, որտեղ նմանապէս մեր մի նախադասութիւնը ներկայացրած էր լեզուչրջած կերպով, և աղ լեզաշրջածը տպւած էր նմանապէս նոսր տառերով: Վնագատը ստորագրել էր «Յ. Ն.», որը ինքը զարմանում էր իւր ստեղծած նախադասութեան վերայ և հրաւիրում էր իւր ընթերցողներին մասնակից լինել իւր խնդութեանը:

---

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԱԻԵՏԻՔ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ

---